ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ

10.04.2020 17:42

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) համաճարակի տարածումը կանխարգելելու նպատակով և առաջնորդվելով 2020 թվականի գարնանը որակավորման քննություններ կազմակերպելու անհրաժեշտությամբ, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը 08.04.2020թ. կայացած կայացված 7/6-Լ որոշմամբ փոփոխել և լրացրել է Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգը և հաստատել վերջինիս հավելվածը հանդիսացող «Արտակարգ դեպքերում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ը:

«Արտակարգ դեպքերում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ը կիրառվելու է բացառապես կամավորության սկզբունքով և վերջինիս համապատասխան որակավորման քննություն կազմակերպվելու է ՀՀ փաստաբանական դպրոցի միայն այն շրջանավարտների համար, **ովքեր կհայտնեն նման ցանկություն:**

Որակավորման քննությունը կազմակերպվելու է հեռավար հաղորդակցման միջոցների օգտագործմամբ: Հավակնորդը որակավորման քննությունը հանձնելու է Ժամանակացույցում նշված **քննության օրը** և **առանձին ծանուցմամբ նշված ժամին**, իր բնակության կամ այլ վայրից՝ լրացնելով Հանձնաժողովի կողմից իրեն տրամադրված **1 (մեկ) թեստային առաջադրանք**:

Որակավորման քննության նոր ձևաչափի շրջանակներում հավակնորդները հանձնելու են թեստային առաջադրանք, որը կազմված է լինելու **10 (տասը) հարցից՝**

1) **4 հարցը՝** Փաստաբանի վարքագծի կանոնագրքից (**առաջին բաղադրիչ**).

2) **6 հարցը՝** ըստ հավակնորդի մասնագիտական ուղղվածության՝ քաղաքացիաիրավական, վարչաիրավական կամ քրեաիրավական (**երկրորդ բաղադրիչ**):

Թեստի յուրաքանչյուր հարց կունենա **4 (չորս)** այլընտրանքային պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ պատասխան, իսկ մյուսները՝ սխալ են կամ ճիշտ պատասխանի համեմատությամբ՝ ոչ լիարժեք, որոնք նույնպես որակվելու են որպես սխալ պատասխաններ:

Թեստային հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է

2 (երկու) միավոր, իսկ սխալ պատասխանին միավոր չի տրամադրվում:

Որակավորման քննությունը հանձնած է համարվում այն հավակնորդը, ով ստացել է առնվազն **12 (տասներկու) միավոր** (**այսուհետ՝ անցողիկ միավոր**), այդ թվում՝

1) առաջին բաղադրիչից ստացել է առնվազն **4 (չորս)** միավոր, և

2) երկրորդ բաղադրիչից ստացել է առնվազն **8 (ութ)** միավոր:

Բեռնել «Արտակարգ դեպքերում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })